

**Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017 թ. Փետրվարի 17-ին կայացած թիվ 6 նիստի**

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 34-ը:

Օրակարգում՝

- Դոցենտի գիտական կոչման շնորհան հարցը /զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Ֆ.Դ.Դանիելյան/
- Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը
- Ձմեռային քննաշրջանի արդյունքների քննարկում
- Մագիստրոսական ատենախոսությունների պատրաստման և պաշտպանության նոր պահանջների հարցը

- **Դոցենտի գիտական կոչման շնորհան հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ. Անահիտ Նորայրի Առաքելյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ. Դանիելյանը: Նա ներկայացրեց մրցութային հանձնաժողովի եզրակացությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի II 5Բ կետը՝ երաշխավորել Ա.Ն.Առաքելյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

- **Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու անվան անվանական կրթաթոշակի շնորհման հարցը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսա-
բանության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի
Ռուզաննա Գևորգյանին՝ հաշվի առնելով նրա բարձր առաջադիմությունը և ակտիվ
մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին:

ԼՍԵՑԻՆ՝ Նորայր Սիսակյանի անվան անվանական կրթաթոշակի շնորհման հարցը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ն. Սիսակյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել
կենսաբանության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող Սահակ Աշոտի
Եղիազարյանին՝ հաշվի առնելով նրա բարձր առաջադիմությունը և ակտիվ
մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին:

- **Ձմեռային քննաշրջանի արդյունքների քննարկում**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ Կ.Ա.Ղազարյանին: Նա
նշեց, որ ձմեռային քննաշրջանն անցել է համաձայն օրացուցային պլանի: Սակայն,
վերջին տարիներին ընդհանուր առմամբ դիտվում է ուսանողների առաջադիմության
անկում: Հատկապես շատ են լուծարքները ոչ ֆակուլտետային առարկաներից:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.



Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ



Ա.Ֆ.Կարապետյան